ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 14-Լ

«16» 01 2024 թ.Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի 1 թափուր հաստիքը նույն վարչության պետի տեղակալի 1 հաստիքով և Լոռու մարզի դատախազության ավագ դատախազի 1 թափուր հաստիքը նույն մարզի դատախազության դատախազի 1 հաստիքով փոխարինելու, Կոտայքի մարզի դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և Արմավիրի մարզի դատախազության դատախազի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանի 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ բաժնի 6-րդ գլխի 18-րդ կետի «Վարչության պետի տեղակալ 2» բառերը փոխարինել «Վարչության պետի տեղակալ 3», իսկ 19-րդ կետի «Վարչության ավագ դատախազ 5» բառերը՝ «Վարչության ավագ դատախազ 4» բառերով,

2) 4-րդ բաժնի 26-րդ գլխի 100-րդ կետի «Դատախազության դատախազ 8» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 9», իսկ վերջին տողի «**Ընդամենը 15**» բառերը՝ «**Ընդամենը 16**» բառերով,

3) 4-րդ բաժնի 28-րդ գլխի 107-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 3» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 2», իսկ 108-րդ կետի «Դատախազության դատախազ 8» բառերը՝ «Դատախազության դատախազ 9» բառերով,

4) 4-րդ բաժնի 29-րդ գլխի 112-րդ կետի «Դատախազության դատախազ 10» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 9», իսկ վերջին տողի «**Ընդամենը 17**» բառերը՝ «**Ընդամենը 16**» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**